
**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

ԽՆԿՈՅԱՆ Ա. Կ.

Գիտատեխնիկական առաջընթացը, որպես գիտելիքի վրա հիմնված հասարակության ստեղծման և երկրի տնտեսության զարգացման կարևորագույն գործոն, անմիջականորեն կապված է երկրում իրականացվող գիտատեխնիկական քաղաքականության հետ: Դա առնչվում է գիտության, տնտեսության, բիզնեսի և կառավարման գործառնությունների հետ և պայմանավորված է երկրում առկա տնտեսական և քաղաքական իրավիճակով և իրականացվող բարեփոխումներով: Այսպես, օրինակ, Հայաստանը նախկինում հայտնի էր հզոր գիտատեխնիկական ներուժով և հեղինակավոր գիտական դպրոցներով: Սակայն, երբ փորձում ենք պարզել, թե ինչ դեր են ունեցել մեր տնտեսության զարգացման մեջ, հանգում ենք հետևյալ եզրակացության: Քիչ բացառություններով, վաճառքի նյութ են դարձել կամ ներդրվել են հիմնականում այն արդյունքները, որոնց ստացման գործընթացում ներգրավված են եղել կամ մասնակցություն են ունեցել դրանց օգտագործման մեջ շահագրգռված ձեռնարկությունները կամ կազմակերպությունները: Հիմնականում հիմնարար գիտությամբ զբաղվող կազմակերպություններում ինքնուրույնաբար ստացված արդյունքները միշտ էլ երկարատև և ծանր փորձությունների են ենթարկվել ներդրման դժվարին ճանապարհին: Ի վերջո, չպետք է մոռանալ, որ հիմնարար գիտության դերը ոչ թե անմիջականորեն կիրառական արդյունքների ստացումն ու նոր տեխնոլոգիաների ստեղծումն է, այլ կիրառական նոր ուղղությունների զարգացմանը խթանելը:

Այս տեսանկյունից առավել կարևոր է տարբեր երկրների փորձի վերլուծության հիման վրա բացահայտել այն մեխանիզմները, որոնց օգնությամբ երկրում իրականացվող գիտատեխնիկական քաղաքականությունը կարող է նպաստել նոր գիտելիքների ստացմանը և դրանց միջոցով ապահովել տնտեսության զարգացումը: Զարգացած երկրներում տնտեսական աճը հիմնականում ապահովվում է նոր գիտելիքների և տեխնոլոգիաների ստեղծման և դրանց օգտագործման շնորհիվ: Այդ պատճառով գիտահետազոտական և գիտատեխնիկական աշխատանքները այդ երկրներում արժանանում են պետության աննախադեպ աջակցության:

Պետության կողմից գիտատեխնիկական գործունեության կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է գիտական «արտադրության» և արտադրանքի յուրահատկություններով¹: Դրանց պատճառը առավելապես գիտական հետազոտությունների տնտեսա-

¹ **Иванова Н.,** *Финансовые механизмы научно-технической политики (опыт стран Запада)*, <http://rusref.nm.ru/indexpub79.htm>

կան արդյունքների անկանխատեսելիությունն է, երբ նույնիսկ առևտրայնացման տեսանկյունից հեռանկարային արդյունքներից շատ դժվար է շահույթ ակնկալել հեղինակային իրավունքի պահպանման գոյություն ունեցող համակարգի պայմաններում: Բայց ամենակարևորն այն է, որ շուկան ի վիճակի չէ ապահովել գիտության մեջ անհրաժեշտ ներդրումների իրականացումը: Հենց սա էլ պետության կողմից գիտության ոլորտի կարգավորման անհրաժեշտության հիմնական խնդիրներից է:

Այս պատճառով պետական գիտատեխնիկական քաղաքականության հիմնական խնդիրը պետք է լինեն շուկայի կողմից գիտության ոլորտի ֆինանսավորման անկարողության, գիտատեխնիկական հետազոտությունների հետ կապված ռիսկի նվազեցման և ինովացիոն գործունեությանը խոչընդոտող այլ գործոնների չեզոքացման նպատակով անհրաժեշտ միջոցառումների մշակումն ու իրականացումը:

Հայտնի է, որ երկրում գիտատեխնիկական քաղաքականության իրականացման հիմնական լծակը պետական բյուջեն է: Ջարգացած երկրներում պետությունն իր վրա է վերցնում ազգային գիտական ծախսերի մեկ հինգերորդից մինչև կեսը, իսկ հիմնարար գիտության մեջ՝ կեսից մինչև երկու երրորդը²: Հայաստանի նման երկրներում առանց վարանելու կարելի է ասել, որ այդ թիվը շատ ավելի մեծ է: Հիմնարար հետազոտությունները գիտությունների ակադեմիաներում (կամ վերջիններին հավասարեցված պետական գիտական կենտրոններում) և համալսարաններում ամբողջովին ֆինանսավորվում են պետական բյուջեի հաշվին: Պետական բյուջեից են ֆինանսավորվում պաշտպանական ուղղվածության հետազոտությունները թե՛ պետական և թե՛ մասնավոր հատվածում, ինչպես նաև առավել թանկարժեք և մեծածավալ հետազոտական կայանքների ստեղծման աշխատանքները:

Արդյունաբերական զարգացած երկրներում բյուջեի ծախսային մասով գիտության ֆինանսավորման ծավալները վերջին տասնամյակներում կայուն բարձր են³: ԱՄՆ-ում այն կազմում է 6-7%, Ֆրրանսիայում, Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, Իտալիայում՝ 4-5%, Ճապոնիայում՝ 3-3,5%: Գիտության բյուջետային ֆինանսավորման ծավալներից ռազմական ուղղվածության հետազոտությունների մասը կազմում է ԱՄՆ-ում ավելի քան 55,3%, Մեծ Բրիտանիայում՝ 44,5%-33,5%, իսկ ոչ ռազմական ուղղվածության հիմնարար հետազոտությունների մասը Ճապոնիայում՝ 51,2%, Գերմանիայում՝ 51,4%, Կանադայում՝ 35%, Իտալիայում՝ 46,4%: Մինչդեռ Հայաստանում գիտության ֆինանսավորման ծավալները փաստացիորեն կազմում են պետական բյուջեի ծախսային մասի ընդամենը շուրջ 1%-ը: 2009 թ.-ի Հայաստանի գիտության բյուջեն կազմում է

² Дэвид А., Дайкер Д., Государственная поддержка науки и техники в рыночных условиях (Научно-техническая сфера: проблемы управления наукой в странах ЕС, М., 1999).

³ Иванова Н., նշվ. աշխ., <http://rusref.nm.ru/indexpub79.htm>, National Science Board, Washington, D.C. 1996, p.156-157.

պետական բյուջեի 0.87%-ը: Այն կազմում է 8,37 միլիարդ դրամ, որից 5,22-ը տրամադրվում է բազային ֆինանսավորմանը (որից էլ 2,5 միլիարդը՝ հիմնարար գիտությանը)⁴:

Պետական բյուջեից համալսարանների և պետական գիտական կազմակերպությունների ֆինանսավորումն իրականացվում է անհատույց՝ հետազոտական նախագծերին տրամադրվող դրամաշնորհների ձևով: Դրամաշնորհային ձևը հիմնարար գիտության ֆինանսավորման առավել արդյունավետ ձևերից մեկն է: Պետական բյուջեից հետո հաջորդ կարևորագույն լծակը, որն օգտագործվում է զարգացած երկրներում պետական գիտատեխնիկական քաղաքականության իրականացման համար, կազմակերպչական բնույթի է:

Կազմակերպչական բնույթի մեխանիզմների օգտագործումը թույլ է տալիս ապահովել գիտատեխնիկական ոլորտում ընդգրկված պետական և մասնավոր հատվածների փոխհամագործակցությունը իրավական դաշտում, որն այնքան պակասում է Հայաստանի դեպքում: Այս պայմաններում ֆինանսական միջոցների հոսքերը պետական բյուջեից դեպի համատեղ գործող կորպորատիվ կառույցներ պետք է ապահովվեն մի շարք կազմակերպչական մեխանիզմների միջոցով, որոնք պետք է մշակվեն և իրականացվեն իշխանության օրենսդիր և գործադիր թևերի համատեղ ջանքերով, համապատասխան նախարարությունների, գերատեսչությունների և շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ:

Զարգացած երկրներում կազմակերպչական բնույթի մեխանիզմներից կարևորագույնը գիտահետազոտական աշխատանքներում պետպատվերի տեղադրումն է, որն իրականացվում է, օրինակ, ԱՄՆ-ում, այնպիսի լծակների օգնությամբ, ինչպիսիք են պայմանագրերը և ծրագրերը: Այդ երկու լծակներն էլ դաշնային պայմանագրային համակարգի մասն են կազմում, որը ապահովում է պետական պատվերների տեղադրումը և կառավարումը: Այդ համակարգի օգնությամբ ստեղծվում է կառավարության (ի դեմս նախարարությունների ու գերատեսչությունների) և տնտեսության մասնավոր հատվածի (ի դեմս պետության կարիքների համար աշխատող ընկերությունների) կայուն տնտեսական և ֆինանսական համագործակցություն:

Հայաստանում գիտության ոլորտում պետպատվերի գաղափարը նոր է ձևավորվում պետական նպատակային ծրագրերի տեսքով և հիմնականում այլ բնույթ է ստացել, քանի որ այն նույնպես ծառայում է պետական սեփականություն համարվող գիտական կազմակերպությունների գործունեությանը:

Այսպիսով, Հայաստանում գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորումն իրականացվում է հետևյալ ձևերով. ա) բազային ֆինանսավորում, որը հատկացվում է գիտական պետական կազմակերպություններում հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտու-

⁴ Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին (ընդունվել է 27.11.2008, arlis.am):

յունների իրականացման, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ու գիտական կադրերի պատրաստման նպատակներով, բ) նպատակային-ծրագրային ֆինանսավորում, որն իրականացվում է մրցութային հիմունքներով և ուղղված է գիտության ու տեխնիկայի առաջնային ուղղություններին համապատասխանող գիտատեխնիկական պետական ծրագրերի կատարմանը, գ) պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում, որն ուղղված է գիտնականների և հետազոտական խմբերի (կոլեկտիվների) նախաձեռնությամբ ներկայացված ու մրցութային կարգով ընտրված հետազոտական նախագծերի իրականացմանը: Պետական բյուջեից նշված երեք ձևով ֆինանսավորման ծավալների միջև համամասնությունները որոշվում են պետական բյուջեի մասին օրենքով⁵:

Հայտնի է, որ որպես երկրի տնտեսական հզորության և կենսունակության հայելի կարող է դիտարկվել ՀՆԱ-ից գիտության ֆինանսավորմանը հատկացվող ծավալի մեծությունը: Եվրոպան ևս, կարևորելով այս հանգամանքը, շարունակում է ընթանալ դեռևս 2000 թ. Եվրախորհրդի իր առջև դրած նպատակը իրականացնելու ճանապարհով, այն է՝ Եվրոպական Միությունը մինչև 2010 թ. դարձնել «աշխարհում ամենամրցունակ և դինամիկ, գիտելիքի վրա հիմնված տնտեսություն»: Իսկ դա հնարավոր է գիտությանը տրամադրվող ֆինանսավորման ծավալների մեծացման պայմաններում: Լիսաբոնի ռազմավարության հիմնական ուղղությունը գիտելիքի և ինովացիայի խթանումն է: Ահա թե ինչու Բարսելոնայի եվրոպական գազաթաժողովին, որը կայացավ 2002 թ. մարտին, եվրոպական պետությունների և կառավարությունների ղեկավարները նպատակ դրեցին մինչև 2010 թ. ավելացնել Եվրոպայի ներդրումների ընդհանուր մակարդակը գիտական հետազոտությունների մեջ՝ այն հասցնելով մինչև ՀՆԱ-ի 3%-ը⁶:

Եթե երկրի գիտատեխնիկական համակարգը ստանում է ՀՆԱ-ի 2%-ից պակաս ֆինանսավորում, ապա այն պատկանում է արտահանման հումքային ուղղվածություն ունեցող թույլ զարգացած գիտատեխնիկական համակարգ ունեցող երկրների շարքին⁷: Այսօր Հայաստանի գիտության ոլորտը ստանում է ՀՆԱ-ի 0,26%-ի չափով ֆինանսավորում: Մինչդեռ կայուն զարգացում ունեցող երկրները գիտատեխնիկական ոլորտի վրա ծախսում են իրենց ՀՆԱ-ի 2-3%-ից ոչ պակաս: Երկիրը որքան շատ է ծախսում գիտատեխնիկական ոլորտի վրա, այնքան բարձր են նրա տնտեսական զարգացածության մակարդակը և բնակչության կենսամակարդակը:

⁵ Հայաստանի Հանրապետության օրենքը գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին (ընդունվել է 05.12.2000, arils.am):

⁶ European Commission, *Towards a European Research Area - Science, Technology and Innovation – Key Figures 2003-2004*. Luxembourg: Office for Publications of the European Communities 2003 - 96pp. - 21x14.8cm. ISBN 92-894-5814-3, ISSN 1725-3152.

⁷ Глухов В., Коробко С., Маринина Т., *Экономика знаний, СПб., 2003.*

Ժամանակակից գիտատեխնոլոգիական համակարգի ձևավորման խնդրում էական դեր ունի գիտական հետազոտությունների և ինովացիաների ֆինանսավորման օպտիմալ եղանակների մշակումը: Ֆինանսավորման ձևերը, մեթոդները և մոդելները պայմանավորված են բազմաթիվ հանգամանքներով, ներառյալ՝

- երկրում պատմականորեն ձևավորված գիտական հետազոտությունների ուղղությունները,

- առկա գիտական ներուժը և դրա նպատակային օգտագործման անհրաժեշտությունը,

- արտադրության զարգացման աստիճանը,

- բանկային համակարգի ներուժը,

- գիտահետազոտական կազմակերպությունների և բուհերի գիտահետազոտական բաժինների կառուցվածքը,

- արտադրական և ճյուղային գիտության ներուժի օգտագործման մակարդակը,

- երկրում կյանքի մակարդակը:

Պետության կողմից գիտության ֆինանսավորման բնագավառում իրականացվող քաղաքականությունը պայմանավորված է նաև մի շարք այլ հանգամանքներով, այդ թվում՝ ֆինանսավորում հատկացնելու ժամանակահատվածով, երկրի յուրահատկություններով և գերակայություններով: Գերակայությունների փոփոխմանը համընթաց պետք է փոփոխվեն նաև պետական ֆինանսավորման չափը և գիտության ու տեխնիկայի հանդեպ իրավական աջակցության աստիճանը: Հետևաբար, ներդրման իմաստով առավել հաջողություններ են ունեցել հիմնականում այն գիտական կազմակերպությունները, որոնք անմիջականորեն գործել են երկրի առաջատար և կարևորագույն արտադրական միավորումների համակարգում, ինչպես, օրինակ, Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը կամ ճյուղային մի շարք այլ ինստիտուտներ: Որոշակի հաջողություններ են ունեցել միայն այն ակադեմիական կամ բուհական գիտական կազմակերպությունները, որոնք երկարատև պայմանագրային կապերի մեջ են եղել հիմնականում պաշտպանության համակարգի գիտաարտադրական միավորումների հետ:

Այսպիսով, առևտրայնացման տեսանկյունից առավել հաջողություն կարելի էր սպասել այն հետազոտություններից, որոնցում աշխատանքի այս կամ այն փուլում ներգրավվում էր պոտենցիալ ներդրողը և աշխատանքներն ուղղում դեպի ներդրման համար իրեն առավել ձեռնտու և օպտիմալ ճանապարհը: Այս մեխանիզմը հիմնականում գործում է նաև շուկայական տնտեսության պայմաններում:

Խորհրդային Միության փլուզումից հետո, կապված տնտեսության քայքայման, նախկին տնտեսական կապերի խզման և շուկայական հարաբերություններին անցնելու հետ, լիովին փոխվեցին Հայաստանի գիտության թե՛ կառուցվածքը, թե՛ գոյության պայմանները: Եթե խորհրդային շրջանում գիտության գերակշռող մասը (մոտ 80%-ը) կենտրոնացված էր համամիութենական գիտաարտադրական միավորումների կամ առնվազն դրանց հետ նույն նախա-

րարությունների կազմում, և միայն փոքր մասը՝ Գիտությունների ակադեմիայում և բուհերում, ապա մի քանի տարի անց պատկերը լիովին այլ էր: Այժմ արդեն գիտական հետազոտությունների հիմնական մասը (ավելի քան 80%) իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի ինստիտուտներում և բուհերում, որոնք, զբաղվելով հիմնարար հետազոտություններով, հիմնականում զրկված են հզոր ընկերությունների կամ գիտաարտադրական միավորումների հետ համագործակցելու հնարավորությունից՝ պարզապես մեր երկրում վերջիններիս բացակայության կամ գիտության նվաճումների նկատմամբ հետաքրքրության բացակայության պատճառով: Ընդամին, գիտության ֆինանսավորման ծավալների տասնապատիկ անգամներով կրճատումը խիստ անբարենպաստ պայմաններ է ստեղծել թե՛ մրցունակ կիրառական գիտական արդյունքների ստացման և թե՛ դրանց առևտրայնացման և հատկապես ներդրման համար:

Այս պայմաններում արդեն առաջին պլան է մղվում կիրառման իմաստով հետաքրքրություն ներկայացնող հետազոտությունների լիարժեք գովազդի, ինչպես նաև արտասահմանյան (նաև հայրենական, եթե այդպիսիք լինեն) հզոր ընկերությունների և միավորումների բացահայտման և դրանց հետաքրքրությունը դեպի այդ հետազոտությունների արդյունքները գրավելու աշխատանքների անհրաժեշտությունը: Կարևորվում են նաև գիտության ֆինանսավորման սկզբունքների, գիտահետազոտական աշխատանքների շահութաբերության գնահատման մեթոդաբանության և գիտական արտադրանքի գնահատման սկզբունքների ու չափորոշիչների մշակումն ու կատարելագործումը:

Այսօր հիմնարար գիտության մեջ պետական ներդրումների շահութաբերությունը որոշվում է կամ տնտեսագիտական կամ Մենսֆիլդի մեթոդներով⁸: Առաջին դեպքում գիտության ֆինանսավորման ծավալների աճը փորձ է արվում կապել միայն տնտեսական աճի հետ և բացատրել միայն «արտադրության գործոնով», կապիտալի ու աշխատանքի ծավալների աճով: Այս մեթոդի սահմաններում ստացված գնահատականների համաձայն՝ հետազոտական աշխատանքների (կիրառական և հիմնարար) վրա պետության ծախսերն օժտված են մեծ շահութաբերությամբ (20-50%): Մյուս կողմից՝ գիտության բնագավառում ներդրումների շահութաբերության գնահատման տնտեսագիտական մոտեցումը լուրջ կասկածներ է հարուցում, քանի որ այն հաշվի չի առնում արտադրական գործոնների տարաբնույթ լինելը և չի ելնում մի գործոնը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունից:

Մենսֆիլդի առաջարկած քանակական մեթոդն օգտագործվում է հիմնարար հետազոտությունների մեջ պետական աջակցության շահութաբերությունը գնահատելու համար: Ըստ արևմտյան երկրների փորձի՝ հիմնարար գիտության մեջ պետական ներդրումները օժտ-

⁸ Дэвид А., Дайкер Д., *նշվ. աշխ.*: *A Review of Edwin Mansfield's Estimate of the Rate of Return from Academic Research and its Relevance to the Federal Budget Process*, Washington, D.C. 2015. <http://www.cbo.gov/doc.cfm?index=6443>

ված են մեծ շահութաբերությամբ, որը կարող է հասնել տարեկան մինչև 28%-ի: Ինչպես և տնտեսագիտական մոտեցման դեպքում, այս մեթոդի թերությունները նույնպես կարող են հանգեցնել հաշվարկված մեծությունների իջեցմանը և ոչ թե բարձրացմանը:

Զարգացած երկրների փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնարար գիտության մեջ պետական ներդրումները, բացի անմիջական նյութականից, տալիս են նաև հսկայական սոցիալական արդյունք: Հիմնարար հետազոտությունների պետական ֆինանսավորման կողմնակի դրական արդյունքները նույնիսկ գերազանցում են ուղղակիորեն ստացվող շահույթը: Այստեղ հատկապես կարևորվում են երիտասարդ մասնագետների պատրաստումը, ժամանակակից հետազոտական մեթոդների ստեղծումը, գիտական հետազոտությունների և արտադրության հետ կապված բարդ խնդիրների լուծման համար մասնագիտական ներուժի համախմբումը: Հիմնարար գիտությունը և դրա միջոցով նաև կիրառական գիտությունը ստեղծում են իրենց սեփական մարդկային կապիտալը:

Ինչ վերաբերում է ձեռնարկություններին, ապա գիտելիքի առկայության փաստն արդեն վկայում է այն մասին, որ դրա կրողը օժտված է նոր գիտելիքներ ձեռք բերելու և գիտակցված ձևով դրրանք օգտագործելու ունակությամբ: Սա էլ հենց կարևորագույն ներդրում է նոր արտադրանքի ստեղծման գործում: Այս գործընթացում տեղի է ունենում նաև նոր մեթոդաբանության, գաղափարների և սարքավորման փոխանցում հիմնարար հետազոտությունների ոլորտից դեպի արտադրություն: Պետք է հիշել, որ փորձարարական գիտության ինովացիոն արժեքը հաճախ ավելի բարձր է, քան նոր մեքենաների ստեղծման արժեքը: Մրա հետ մեկտեղ փորձարարական գիտության արդյունքները հիմնականում ներկայացնում են միջմասնագիտական արժեք, և այդ պատճառով դրանցից սպասվող ֆինանսական փոխհատուցումը դուրս է գալիս մեկ գիտական ճյուղի սահմաններից:

Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ արտադրության մեջ տեխնոլոգիաների օգտագործման նոր մեթոդաբանությունների ստեղծման բնագավառում իր նշանակությամբ երկրորդ տեղը (չորսից) պատկանում է բյուջետային գիտահետազոտական կազմակերպություններին: Այս հարցի հետ կապված՝ չափազանց կարևորվում է, որ գիտատեխնիկական մշակումներով զբաղվող համակարգի կառուցվածքը հնարավորություն տա այն առավել արդյունավետ օգտագործելու երիտասարդ մասնագետների պատրաստման և գործնական խնդիրների լուծման համար, և որ գիտահետազոտական աշխատանքով զբաղվող մասնագետները լինեն հնարավորինս ազատ և ապահովված անհրաժեշտ ռեսուրսներով գիտահետազոտական մեթոդաբանությունը առավելագույնս զարգացնելու համար:

Գիտատեխնիկական բնագավառում գերակայությունների որոշման համար ավելի հաճախ սկսվում է օգտագործվել «կանխատեսման» մոտեցումը, որը թույլ է տալիս ձևավորել հետազոտությունների կարևորագույն ուղղությունները երկարատև ժամանակահատվածի համար՝ փոխանակ փորձելու փորձաքննությամբ հայտնաբե-

րել հաղթող հավակնորդին և դրա հետ կապել հույսերը: «Կանխատեսման» մեթոդի օգտագործման արդյունավետությունը առավելագույնս կախված է ֆինանսավորման միջանկյալ աղբյուրների առկայությունից, որոնք բավարար ֆինանսական հնարավորություններ կարող են ստեղծել այդ մոտեցման հիման վրա կիրառական նախագծերի մշակման համար:

Արդյոք գոյություն ունի՞ անմիջական կապ բյուջետային հիմնարար գիտության և մասնավոր տնտեսության զարգացման միջև, արդյոք կարո՞ղ է նպաստել այն նոր ընկերությունների ստեղծմանը: Այս հարցի վերաբերյալ միարժեք ապացույցներ չկան: Ըստ որոշ մասնագետների՝ գրասենյակային գիտնականներից հիմնականում վատ գործարարներ են ստացվում, և նրանց առաջարկած տեխնոլոգիաները արդյունավետ օգտագործելու համար դրանց կառավարումը և գուցե նաև սեփականության իրավունքը պետք է հանձնվեն նոր տիպի գործարար մասնագետների:

Շուկայական տնտեսությամբ երկրների փորձը ցույց է տալիս, որ մասնավոր ընկերություններն արդեն սկսում են իրենց տեղը զբաղեցնել գիտահետազոտական ոլորտում, որպեսզի կարողանան ամրապնդել իրենց կապերը ակադեմիական գիտության խոշորագույն կենտրոնների հետ: Հետևաբար, պետական բյուջեից և մասնավոր աղբյուրներից ֆինանսավորվող հիմնարար հետազոտություններն արդեն ոչ թե փոխարինում են մեկը մյուսին, այլ փոխլրացնում:

Ելնելով զարգացած երկրների փորձից՝ արդեն կարելի է հավաստել, որ հիմնարար գիտությունն այն կարևորագույն հիմքն է, որով և պայմանավորվում են երկրի արդյունաբերական մրցունակությունը և տեխնոլոգիական ճկունությունը:

Զարգացած շուկայական տնտեսությամբ երկրների փորձի վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ կենսունակ գիտական համակարգը, իր ներուժային շահութաբերությամբ հանդերձ, կարող է ձևավորվել և գոյատևել միայն պետական աջակցության և ճիշտ գիտատեխնիկական քաղաքականության իրականացման պայմաններում: Դա ներառում է ինչպես պետականորեն ձևավորված իրատեսական գերակայությունների առկայությունը, պետական բյուջեից ֆինանսավորման ծավալների չափը, այնպես էլ գիտության ոլորտում համապատասխան կառուցվածքաիրավական ձևերի ներդրումը և բարենպաստ օրենսդրական դաշտի ստեղծումը:

МЕХАНИЗМЫ НАУЧНОЙ И ИННОВАЦИОННОЙ ПОЛИТИКИ В РА

ХНКОЯН А. К.

Резюме

Научно-технический прогресс как важнейший фактор развития экономики страны непосредственно связан с е, научно-технической политикой. В развитых странах экономический рост

обеспечивается, в основном, благодаря использованию новых знаний и технологий, в силу чего научно-исследовательские изыскания и научно-технические разработки в этих странах пользуются огромной поддержкой государства. Сегодня на финансирование науки в РА выделяется около 0,26% ВВП, в то время как страны, имеющие стабильное развитие, тратят не менее 2-3% ВВП на научно-техническую сферу. После распада Советского Союза, повлекшего за собой развал экономики и переход к рыночным отношениям, полностью изменились структура и условия развития науки в нашей республике.

Сокращение объема финансирования науки отрицательно сказалось на развитии науки в целом, в том числе в плане практического внедрения научных разработок и коммерциализации науки. В этих условиях необходимо усовершенствовать методологию оценки прибыльности научно-исследовательских работ, а также принципы и критерии оценки научной продукции. На основе анализа опыта стран с развитой рыночной экономикой можно заключить, что наука со своей потенциальной прибыльностью может формироваться и существовать лишь в условиях государственной поддержки и осуществления правильной научно-технической политики, направленной на создание благоприятного законодательного поля в сфере науки.